

«Հանձն (գրք.), Անձն-ի նախդրիվ ձև», «Ան-
ձանց, գ. (գրք.). Անձ-ի հզեկ. սեռ-ը», «Առ-
նուն, բ., (գրք.). Առնուլ-ի ներկա եզ. 3-րդ դժմ-
քը», «Արասցե (2), բ., (գրք.). Արարել-ի ապ.
եզ. 3-րդ դժմքը, «Ընկալ (1), բ. (գրք.). Ընկա-
լել-ի հրամ. եզակին» և այլն: Մեր կարծիքով՝
նիշտ կլինեն՝ նման բոլոր բառերի սկզբնաձևերը
լինելի գրարար, ուրեմն՝ Անձն-ի և ո՛չ անձ-ի,
տոնել-ի (անել,-ի) և ո՛չ արարել-ի, ընկալու
լլընկալու (= ընդունել) -ի և ոչ ընկալել-ի և
այլն:

4. Չի կարելի չնկատել, որ առանձին դեպ-
քերում բառերի իմաստաբերականության սահմա-
նագատումները շարժազանցված են: Օրինակ՝ Հա-
նուն բառի համար տրված են երկու իմաստա-
յին նշումներ՝ «1. Մի բանի համար՝ նպատա-
կով... 2. Ս սեր, համար, որևէ բանի սիրույն»,
որոնց մեջ, բառ էություն, որևէ ներքերանգային
տարբերություն չկա: Այդ են հաստատում վե-
րոնիշյալ նշումների համար քերված վկայու-
թյունները, որոնցում հանուն բառը միևնույն
նպատակային հարաբերությունն է արտահայ-

տում, ինչպես՝ «...Ինչո՞ւ են նետվում, ի՞նչ քն-
հուրհուում, Հանուն ի՞նչ բանի կյանքներ են գո-
հում» (Ա. 358), «...Որոնցով ես քանի անգամ
շոշափել եմ բունքը մահի՝ Հանուն այս խոր,
պայծառ պահի» (Ա, 50):

Արված այս դիտողությունները, ինչպես աս-
վեց, ունեն մասնակի բնույթ, երբեմն էլ բանա-
վիճակ են և ամենևին չեն նեմացնում գրա-
խոսվող բառարանի արժեքը:

Ի պատիվ բառարանի հեղինակի՝ պետք է ա-
սել, որ նրան լիովին հաջողվել է երևան հանել
բառերի այն բոլոր ամենաուրբ, երբեմն նույն-
իսկ անորսալի իմաստային ներքերանգները, որոնք
վկայված են մեր ժամանակի մեծ բանաստեղծ-
ներից մեկի բնագրերում: Այսպիսով՝ բացահայտ-
ված է Պարույր Սևակի բառապաշարի որակա-
կան ու բանական ողջ հարստությունը:

Արտ. Պապոյանի սույն աշխատանքը իր
հանդիսանում է իր տեսակի մեջ լավագույն բա-
ռարաններից մեկը մեզանում:

Հ. ԱՎՅՏԻՍՅԱՆ

Մ. Ե. ԱՍՍՏԻՅԱՆ, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1983, 470 էջ:

Ժամանակակից հայերենի ձևաբանության
հարցերի բնությունը միշտ եղել է մեծում է հայ
ավանդական և հորագույն լեզվաբանության ու-
սումնասիրության ամենահետաքրքիր ու բարդ
խնդիրներից մեկը: Հատկապես վերջին տարիներ-
ին մեծ աշխատանք է կատարվել ինչպես ֆեռա-
կանության մյուս բաժինների, այնպես և ձևա-
բանության բազմաթիվ հարցերի ուսումնասիրու-
թյան ուղղությամբ. յույս են տեսել ոչ միայն
խոսքի մասերի ուսումնառն, դրանց սահմանման
ու դասակարգման, ձևաբանության տեսական այլ
հարցերի, այլև ժամանակակից հայերենի հո-
լովման ու խոնարհման համակարգին նվիրված
բազմաթիվ ակնառու մենագրություններ ու ու-
սումնասիրություններ:

Այս աշխատությունների մեջ իր ուշագրավ
տեղն ունի պրոֆ. Մ. Ասատրյանի «Ժամանակա-
կից հայոց լեզու» (Ձևաբանություն) աշխատու-
թյունը, որը հանձնարարվում է որպես ուսում-
նական ձեռնարկ բանասիրական ֆակուլտետի ու-
սանողների համար: Այն հեղինակի երկար տա-
րիների գիտական պրպտությունների ու տեղաշա-
նախատանքի արդյունքն է, մի ամփոփ ուսում-
նասիրություն, որի հիմնական դրայթներն ու
եզրակացությունները հրատարակվել են միջև այդ
(1970—77 թթ.) երեք գրքերով՝ «Ժամանակա-
կից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» խո-
րագրով:

Մեր կարծիքով, աշխատության արժեքավոր

կողմը նախ և առաջ այն է, որ նա ժամանա-
կակից հայերենի ձևաբանության ամբողջական,
համակողմանի ուսումնասիրություն է:

Չեղինակի սովորածավալ աշխատության մեջ
տալիս է հայերենի ձևաբանության տեսական
բոլոր հարցերի բնությունը, իսկ ապա՝ խոսքի
մասերից յուրաքանչյուրի ֆեռականական կար-
գերի, նրանց առանձնահատկությունների ման-
րամասն վերլուծությունն ու ամբողջական պատ-
կերը:

Ներածական մասում բնվում են ձևաբանու-
թյան տեսական կարևորագույն մի շարք հար-
ցեր, ինչպիսիք են՝ ֆեռականական իմաստ և ձև,
նրանց փոխհարաբերությունը, ֆեռականական
կարգեր, դրանց ըմբռնումն ու աճանաեումը, բա-
ռի տարրալուծումը, ձևայթներ, բառերի ֆեռա-
կանական ու բառակազմական խմբերը և այլն:
Այս բաժնում հատկապես ուշագրության արժա-
նի է խոսքի մասերի որոշման հիմունքների, նը-
րանց դասակարգման, փոխանցումների բնու-
թյունը, մի հարց, որ եղել է մեծում է լեզվաբա-
նության ամենաբարդ պրոբլեմներից մեկը: Հե-
ղինակը հենվելով հայ լեզվաբանական տարբեր
ուսումնասիրություններում տեղ գտած՝ հայերե-
նի խոսքի մասերի դասակարգման գաղազան
սկզբունքների վրա, իրավացիորեն գտնում է, որ
ինչպես բարդ ֆեռականական կարգերի, այնպես
էլ խոսքի մասերի ձևով հիմք առարկայական
իրականությունն է, և որ բոլոր խոսքի մասն-

րին չի կարելի նույն շափանհիշով մտնելալ, տարբեր խոսքիմասային խմբերի մեջ մտնող բառերը տարբեր, ոչ հարաբերակից առանձնահատկություններ են երևան հանում:

Այս բոլորով հանդերձ, աշխատության մեջ խոսքի մասերը ներկայացվում են հայերենի ավանդական վերականգնության մշակած սկզբունքներով: Հնդկիակի այս մոտեցումը նախընտրելի են համարում տվյալ դեպքում նյութի մատուցման մատչելիության նկատառումով:

Աշխատության մեջ հանգամանորեն բնույթյան են առնվում գոյական անվան փերականակա կարգերը:

Ինչպես գոյականը, այնպես էլ մյուս խոսքի մասերը ներկայացվում են վեր են լուծվում երեք մակարդակներում՝ իմաստաբանական, ձևաբանական և շարահյուսական: Յուրաքանչյուր հարց պարզաբանելիս հնդիակեր գիտական բարեխղճությունը անդրադարձնում է այդ մասին եղած հիմնական կարծիքներին, բնատրույում դրանք և ապա նշում իր տեսակետն ու մոտեցումը: Այս առումով հատկապես ուշադրության արժանի է գոյականի հոլովի փերականակա կարգի ուսումնասիրությանը վերաբերող բաժինը: Մ. Ասատրյանը համառոտակի շարադրում է դեռևս 1908 թ. «Արարատ» ամսագրում ծավալված գիտական բանավեճը՝ ակնավոր հայագետներ Մ. Արեղյանի և Ստ. Մալխասյանցի միջև, ապա խոսում է Մ. Արեղյանի՝ հինգ հոլովի տեսության երկրորդ բնագիտության մասին, որը սկսվել էր երեսնական թվականներին Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի կողմից, իսկ վերջում անդրադառնում է հայերենի հոլովման համակարգի մասին եղած վեճերի ու տարակարծությունների երրորդ շրջանին, որ սկսվում է 80-ական թվականներին և շարունակվում մինչև օրս: Նշելով, որ հայերենի հոլովման համակարգի մասին այժմ կա երեք տեսակետ (յոթ հոլովի ավանդական, հինգ հոլովի, իսկ որոշ լեզվաբաններ էլ ժխտելով հայցականը՝ ընդունում են վեց հոլով), Մ. Ասատրյանը պաշտպանում է հինգ հոլովի տեսությունը և պատճառաբանում, որ ժամանակակից հայերենի փերականություններում հիշատակվող հայցական հոլովը շուրջ ուղղակիներից ու տրականից տարբեր, իսկ սեռական էլ տրականից տարբեր բավարար ձևաբանական հատկանիշ...»: Գոյականի առման փերականակա կարգերը բնեկիս հեղինակը տարբերակում է անձի և ոչ անձի (նաև շեշավորի և անշունչի) առումները, գտնելով, որ այս կարգը արդի հայերենի ամենահետադիմ երևույթներից մեկն է, որ չի եղել զբարւում և միջին հայերենում, հատուկ չէ նաև արևմտյան բարբառների մեծ մասին: Ըստ հեղինակի, նրա առաջարկով պայմանավորված է արևելյան աշխարհագրաբի առանձնահատուկ զարգացմամբ և սերտորեն կապված է ներգործողի և կրողի ձևվային տարբերակման հարցի հետ:

Ի տարբերություն նախկինում ընդունված՝ անձի և իրի տարբերակման, հեղինակը գտնում է, որ արդի հայերենում մի կողմից հակադրվում են անձերն ու ոչ անձերը (իրերը և կենդանիները), մյուս կողմից՝ շեշավորները (անձերն ու կենդանիները) և ոչ շեշավորները (իրերը), ուստի և հիշյալ կարգը անձի ու ոչ անձի և շեշավորի ու անշունչի կարգ է հավասարապես, քանի որ այս կարգի հակադրությունները մեր լեզվում այս կամ այն ձևով դրսևորվում են:

Գրում ենտաբերական դիտողություններ կան գոյականի առկայացման (սրոշյալի և անօրոշի) փերականակա կարգի վերաբերյալ: Այս կարգը ոչ թե սուկ խոսողին հայտնի, ծանոթ կամ անծանոթ՝ առականների հարաբերություն է, ցույց տալիս, այլ նախ և առաջ առաջացել ու զարգացել է բառի ընդհանուր և մասնավոր իմաստների փոխհարաբերության հիմքի վրա և կազմավորվել դեռևս մեր հին լեզվում՝ գրաբարում և արտահայտվել հայերենի Ս, Գ, Ն հոլովի առկայությամբ (սրոշյալ) կամ նրանց բացակայությամբ (անօրոշ), որոնք էլ ենտագայում, լեզվի պատմական զարգացման ընթացքում, աստիճանաբար փոխել են իրենց դերը և ձեռք բերել հիմնականում ստացական, մասամբ էլ դիմորոշ ու ցուցական իմաստներ:

Այս առումով մանրամասն խոսվում է նաև «մի» անօրոշ հոգի տարբեր կիրառությունների մասին:

Աշխատության մեջ պատշաճ շափով բնություն են առնվում նաև ածական և թվական անունների, դերանունների խոսքիմասային առանձնահատկությունները, նրանց տեսակները, բառակազմական արժեքն ու շարահյուսական կիրառությունները: Ածականի շարահյուսական կիրառությունները բնեկիս հեղինակը հատկապես կանգ է առնում հայերենին բերող մի առանձնահատկության վրա, որ նկատելի է դեռևս մեր հին լեզվում: Դա այն է, որ որական անձականների մի զգալի մասը գործածվում է ոչ միայն գոյականների հետ՝ որոշիչ պաշտոնով, այլև գործածվում է բայերի հետ՝ ցույց տալով գործողության հատկանիշ և հանդես է գալիս ձեռի պարագայի պաշտոնով:

Եվ ահա այս հանգամանքը հեղինակին հիմք է տալիս պնդելու (իհարկե՝ հետևելով Մ. Արեղյանի տեսությանը), որ երբ ածականները գործածվում են որպես պարագա, առնվում են իբրև առանձին տեսակի բառեր՝ մակբայներ: Այստեղից պարզ է դառնում, որ տվյալ դեպքում բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս հեղինակը առաջին հերթին հաշվի է առնում բառերի շարահյուսական կիրառությունները: Այս հարցում դժգուր է համաձայնվել հեղինակին հետ և համա թե ինչու: Հայտնի է, որ բազմաթիվ գոյականներ կարող են դրվել գոյականների վրա և հանդես գալ որոշյալի կիրառությամբ.

ինչպես՝ աշակերտ Արամ, բժիշկ Աղամյան, ֆա-
ղափ Երևան. բանվոր Պողոս և այլն: Եթե հա-
ցին մոտենանք զուտ շարահյուսական տեսակե-
լույնից, ուրեմն նշված առաջինները պետք է հա-
մարենք անակաճան՝ ր: Կարծում ենք՝ ոչ: Եւայն
է նաև անակաճանների պարագայական կիրառու-
յան դեպքում, հատկապես, եթե նկատի ունե-
նանք, որ հեղինակը խոսքի մասերի ուսուցիչ
իր առարկայական իրականությունն է համար-
ում: Այս առումով տեղի են է հիշատակել պրոֆ.
Գ. Սևակի այն պատկերավոր համեմատություն-
ներ, որ գործ է ածել խոսքի մասերի զասակարգ-
ման առիթով. «Բրդիչը գրելու գործիք է, նրա այդ
սպառողական արժեքը բացարձակ է, ճանաչված
և ընդունված: Սակայն մի՞թե նույն գրիչը դառ-
նում է դանակ կամ գծիչին հենց որ ես այդ գրի-
չը մի անգամ, մի կողմերես իրագրության մեջ
գործածում եմ գրիչի թերթերը կտրելու համար,
կամ՝ մի՞թե գիրքը դառնում է կափարիչ, եթե
մի կողմերես իրագրության մեջ այն գործած-
վում է կնունքի բերանը ծածկելու համար: Պարզ
է, որ ոչ»:

Դերանունները բնեկիս հեղինակը հետաքր-
հիր, արժեքավոր հարցադրումներ է անում հա-
յերենի խոսքի մասերի համակարգում նրանց ու-
նեցած դերի, նրանց սահմանման և դասակարգ-
ման վերաբերյալ: Հեղինակը ճիշտ է նկատում,
որ ժամանակակից ֆերականություններում դեր-
անուն խոսքի մասի մեջ միավորվում են միան-
գամայն տարբեր իմաստային, ձևաբանական և
շարահյուսական առանձնահատկություններ երե-
վան հանգրվան քառախմբի: Այդ համակարգում
իրենց յուրահատուկ ֆերականական հատկանիշ-
ներով տարբերվում են անձնական, փոխադարձ,
ցուցական և հարցական-հարաբերական դեր-
անունները, որոնք էլ կազմում են ժամանակա-
կից հայերենի «իսկական» դերանունները, իսկ
անորոշ, որոշյալ, ժխտական դերանունները պ-
ռանձնահատուկ ֆերականական հատկանիշեր
երևան չեն ճանում: Բայց այսուհանդիս հետո, չգի-
տե՞ք ինչու, Մ. Ասատրյանը դրանք ներկայաց-
նում ու բնութագրում է դերանունների՝ քառույցում իրեն
առանձին տեսակներ՝ պատճառարանելով, որ դա
արվում է խիստ պայմանականությամբ՝ հետևե-
լով ժամանակակից հայերենի ֆերականական հա-
մակարգով ընդունված գրայնություններին:

Հայերենի խոսքի մասերի համակարգում ֆե-
րականական կարգերի ու ձևերի հարստությամբ
ու բազմազանությամբ և ընդհանրապես խոսքի
մեջ ունեցած իր բացառիկ դերով յուրահատուկ
տեղ ունի բայը, որը սույն աշխատության մեջ
պատշաճ բնութագրում է արժանացել: Հեղինակը
հազարամանորեն ու գիտական խորությամբ ներ-
կայացնում է ֆերականական այն հատկանիշ-
ները, որոնցով բնորոշվում է բայը խոսքի մա-
սերի համակարգում, այս խոսքիմասային կար-
գի մեջ մտնող քառույցի իմաստային ճիմքը հա-

մարելով գործողության, ընթացքի հասկացու-
թյունը: Ըստ որում բայի բոլոր ձևաբանական
առանձնահատկությունները բնութագրում են նրա ի-
մաստային յուրահատկությունների հետ սերտա-
րեն կապված:

Բայի ամենացայտուն դրսևորված ձևաբան-
ական առանձնահատկությունը, մյուս խոսքի մա-
սերի համեմատությամբ այն է, որ նա, որպես
կանոն, բաղադրյալ է և պարզ լինելի չի կարող,
որից էլ բխում է նրա մի այլ ձևաբանական ա-
ռանձնահատկությունը. ի տարբերություն մյուս
խոսքի մասերի, որոնք ձևային միություն չունեն
և որոշվում են գլխավորապես իմաստային ճի-
մունքով, բայերն ունեն նաև ձևային բնագիտ-
ություն: Երկարության ձևերում վերջավորվում են
նվ կամ ԱՆ մասնիկներով, դրանով իսկ կազ-
մում տվյալ խոսքի մասի համար ձևային միու-
թյուն: Բացի խոնարհման, սեռի, կերպի ֆերա-
կանական կարգերի առանձնահատկությունից,
բայի ձևաբանական առանձնահատկություն է
համարվում նաև նրան հատուկ ժխտման ֆերա-
կանական կարգը, որն արտահայտվում է Չ մաս-
նիկի միջոցով:

Երկրորդ յուրացման մատչելիության նպատ-
կով գրում բայի ուսումնասիրությունն սկսե-
վում է բայերի ու բայանիմիների կազմության
բնութագրում, որը և միանգամայն ճիշտ է և ըն-
դունելի՝ նկատի ունենալով աշխատության զա-
սագրային բնույթը: Հետաքրհիր ու մանրակր-
կիտ վերլուծությամբ է ներկայացված բայի սե-
ռի ֆերականական կարգի վերլուծությունը, մի
հարց, որով հեղինակը գրազվել է դեռևս տա-
րիներ առաջ և նվիրել առանձին ուսումնասի-
րություն:

Դերայների հարցին անգրագառնալիս Մ.
Ասատրյանը հայ հին ֆերականության ճիմնա-
կան թերությունը համարում է այն, որ այստեղ
բոլոր դերայները բնութագրվում են նույն մակարգ-
կով, ուշադրություն չի դարձվել դերայների ներ-
քին խմբավորմանը և նրանց տարբեր խմբերի
դրսևորած առանձնահատկություններին: Եվ անհ-
հետևելով այս հարցում ճորագույն լեզվաբա-
նության մեջ ընդունված տեսակետներին (հատ-
կապես՝ ակադ. է. Աղայանի), հեղինակը դեր-
այները բնութագրում է երկու խմբերով՝ կերպային
կամ կախյալ և վիճակային կամ անկախ դեր-
այներ: Վերլուծությունները հեղինակին բերում
են այն համոզման, որ եթե կախյալ դերայները
իրարից տարբերվում են սուսկ կերպային-ժամա-
նակային իմաստով, ապա անկախ դերայները
տարասեռ, տարաբնույթ ֆերականական առան-
ձնահատկություններ են դրսևորում, որի պատ-
ճառով էլ Մ. Արեղյանը դրանք տեղաբաշխում էր
տարբեր խոսքի մասերի մեջ: Միանգամայն ի-
րավացի է հեղինակը, եթե անորոշ դերայնը բն-
ութագրում է բայի և գոյական անվան հատկանիշե-
րի, հարակատար դերայնը գործողության և հաս-

կանիչի, ենթակայականը՝ բայական և անվանական հատկանիշների համատեղությամբ: Այս բաժնում առավել ուշադրության արժանի է «հարակատար+եմ—էի» կառուցվածքի բնությունը: Ավելի համոզիչ է այս մասին արված եզրակացության առաջին մասը, ըստ որի՝ «հարակատար դերբայն ունի երկվական բնություն, երկվական բնություն ունեն նաև նրանով և եմ—էի օժանդակ բայով կազմված կառույցները, և դրանք հանելով բայի խոնարհման հարացույցից անտեսում ենք հարակատարի արտահայտած գործողության նշանակությունը»: Բայց հեղինակը այնուամենայնիվ գտնում է, որ ավելի ճիշտ կլինի հարակատար դերբայ+եմ—էի կառուցվածքները հանել, քան թե դրանք բողոքել բայի խոնարհման հարացույցի մեջ:

Աշխատության մեջ ամենայն մանրամասնությամբ բնության են առնվում բայի եզրակա-ժամանակային բոլոր ձևերը, հարադրական, անկանոն բայերի, ժխտական խոնարհման առանձնահատկություններ և այլն:

Գրում մանրամասն բնեմում են նաև մակբայները, կապերը, շարժականները, ձայնարկու-

թյունները, նրանց տեսակներն ու խոսքիմասային առանձնահատկությունները:

Ինչպես այս, այնպես էլ վերևում նշված հարցերը պարզ ու մատչելի լեզվով գրված այս աշխատության մեջ հիմնականում ուսումնասիրվում են համաժամանակյա մտեցումով, եզրակացություններ կատարելիս հեղինակը հենվում է գույն դասական և սովետական շրջանի գեղարվեստական գրականության տվյալների վրա, իսկ առանձին տեսական բնույթի հարցերի կամ որևէ ֆերականական կարգի ծագումն ու զարգացումը ամբողջական ներկայացնելու նպատակով հանախ դիմում է հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերին, ինչպես նաև արևմտահայ զրական լեզվին ու առանձին բարբառներին:

Աշխատանքը հրատարակության է ներկայացրել համալսարանի հայոց լեզվի ամբիոնը, որ հատկապես վերջին տարիներին նետևողական ու զրվատանքի արժանի աշխատանք է կատարում հայոց լեզվի ֆերականության տարբեր բաժիններին նվիրված ուսումնական ձեռնարկներ և զասագրքեր հրատարակելու ուղղությամբ:

Լ. ԵԶԵԿՅԱՆ